ՍՈՒՍԱՆՆԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ*

Բանասիրական գիտությունների դոկտոր
ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվ. գրականության ինստիտուտի
առաջատար գիտաշխատող
sushovh@mail.ru
DOI: 10.54503/1829-4073-2022.2.153-174

ՀԱՅ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՐԱԽՏԱՎՈՐԸ (ՈՒՐՎԱԳԻԾ ԳԱՐԵԳԻՆ ԼԵՎՈՆՅԱՆԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ)

Նվիրվում է Գարեգին Լևոնյանի 150-ամյակին

Բանալի բառեր՝ Գարեգին Լևոնյան, հայագիտություն, «Գեղարվեստ», աշուղագիտություն, գրատպություն, Բաղդասար Դպիր, հուշագրություն:

Ներածություն

Գարեգին Լևոնյանը իր բարձրարժեք աշխատություններով կանգնած է գրականագիտության, մամուլի պատմության գիտականացման հումանիտար ուղղության ձևավորման ակունքներում և հայագիտության մեջ այդ ուղղության հիմնադիրներից մեկն է: Նրա ուսումնասիրություններում հայկական կերպարվեստն է և աշուղական երաժշտությունը, հայ գրականությունն ու գեղագիտությունը, հայ գիրքն ու տպագրական, նաև փորագրական արվեստը, հայոց թատրոնն ու մամուլի պատմությունը: Գ. Լևոնյանի գիտահետազոտական աշխատանքները վերաբերում են հայ մշակույթի ոչ միայն նշված բնագավառներին: Նա ուսումնասիրել է հայ մանրանկարչության և որմնանկարչության հուշարձանները, Արցախի և Ուտիքի մանրանկարչական արվեստը, հայ թատրոնի պատմությունը: Իր յուրաքանչյուր աշխատության մեջ հայագետը փաստական նյութի առատության ընդգրկման, փաստերի համադրման միջոցով մշակում էր գիտության տվյալ բնագավառի իմացական համակարգ, առանց որը վերլուծելու և մեկնաբանելու որևէ մեթոդ կիրառելի չէ: Գ. Լևոնյանի գիտական հետաքրքրության շրջանակում մշտապես եղել են նաև ռուս և

* *Հոդվածը ներկայացվել է 15.04.22, գրախոսվել է 16.05.22, ընդունվել է տպագրության 22.08.22:*

արտասահմանյան գրականության դասականների ստեղծագործությունները: Նա գրախոսում էր օտար լեզուներով մատենագիտական ու հանրագիտարանային բնույթի աշխատություններ[1]: Պատահական չէ, որ նրա բարեկամներից Ավետիք Իսահակյանը 1934-ին հարցնում էր. «Ե՞րբ ես ձեռնարկելու էնցիկլոպեդիայիդ հատորները»[2]: Եվ հենց Իսահակյանն է շատ դիպուկ բնորոշել նրա գործունեությունը՝ իր «Հոգնատանջ բանասերը» խոսուն վերնագրով հոդվածում գրելով. «Լևոնյանի ընդգրկումը լայն էր, հետաքրքրությունները՝ բազմազան, ծրագրերը՝ շատ: Նա տասնյակ տարիների ընթացքում, իր անխոնջ գործունեությամբ հիշեցնելով ժրաջան մեղվին, հավաքել ու կուտակել է ահագին փաստական նյութ գրքերից, արխիվներից, փոշիների տակից, մի խոսքով անհայտությունից լույս աշխարհ բերել բազմաթիվ փաստեր ու տվյալներ, որոնց հիման վրա գիտական ընդհանրացումների հասնելը բանասիրության նոր սերնդի պարտքն է»[3]:

Աշուղագիտության նվիրյալը

Գ. Լևոնյանը աշուղ Ջիվանու որդին էր՝ (ծնվ 06.11.1872 թ. – Ալեքսանդրապոլ) և, անշուշտ, այդ հանգամանքը չէր կարող իր ազդեցությունը չունենալ երիտասարդի գիտական հետաքրքրությունների ձևավորման գործում: Գիտակցական, թե անգիտակցական մղումներով նաև ընտանիքում առկա մշակութաբանական առարկայություններով ձևավորեցին Գարեգինի անհատականությունը և կյանքում ունեցած գիտության ու արվեստի նախասիրությունները: 20-ամյա Լևոնյանը իր ծննդավայրում 1892-ին լույս է ընծայում «Հայ աշուղներ» աշխատությունը[4]: Բանասերի այս երախայրիքում արդեն զգացվում էր տաղանդավոր գիտնական մատենագետը: Հեղինակը հայ մշակույթի ու բանասիրության ասպարեզում ապագա արգասաբեր գործունեության հայտ էր ներկայացրել: Ժամանակագրական հաջորդականությամբ, հստակ համակարգվածությամբ Լևոնյանը ընթերցողին է հաղորդում հայ մշակույթի

---

[1] Նկատի ունենք Մ. Չերազի «Poetes Armeniens», Կ.Կոստանյանի՝ Պետերբուրգում լույս տեսած «Bibliotheca Armeno-Georgica //Летопись на камнях. Собрание – указатель арм. надписей 1913). օտարալեզու աշխատությունների մասին «Մինաս Չերազ և իր գործը», «Հայ-վրացական մատենադարան, 2-րդ վիմական տարեգիր. ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց» վերնագրերով Գ.Լևոնյանի գրախոսականները (տե՛ս Մշակ 1914, № 36, 139, 140):

[2] **Իսահակյան** 2021, 352:

[3] Տե՛ս Սովետական արվեստ 1957, № 11, 71: Տե՛ս նաև **Իսահակյան** 2020, 500:

[4] **Լևոնյան** 1892, 151:

պատմության 200-ամյա շրջանի 225 հայ աշուղներից յուրաքանչյուրի մասին կենսագրական տեղեկություններ: Առաջին իսկ աշխատության մեջ զգացվում էին գիտնական հետազոտողի նախասիրությունները՝ փաստական ամուր հենքի վրա եզրահանգումները կառուցելու ձգտումը և հեղինակի գիտահետազոտական աշխատանքի հանրագիտական բնույթը: Այն արժևորեց գրքի առաջին գրախոսը՝ Գևորգ Ասատուրը (Աստվածատրյան)[5]: Գ. Լևոնյանի կյանքի ու գործի առաջին ուսումնասիրողներից Սարգիս Հարությունյանը գրում է. «Փաստական նյութի առարկայական մատուցում՝ առանց կանխակալ ենթադրությունների ու հետևությունների մոլորության, համեստություն, նյութի արժեքի գիտակցում և նյութի նկատմամբ պատմական մոտեցում,- ահա այն էական հատկանիշները, որ բնորոշ էին Լևոնյանի ոչ միայն անդրանիկ աշխատությանը, այլև հիմնական գծերով հատուկ էին նրա գալիք ուսումնասիրություններին»[6]:

Լավ սկիզբը ունեցավ բեղմնավոր շարունակություն և 1903–1906 թթ. Լևոնյանը հեղինակեց «Աշուղների մասին (Պատմաքննական հայացք)» ուշագրավ աշխատությունը[7], որտեղ կիրառեց աշուղների արվեստի մասին բազմակողմանի քննության մեթոդը: Հեղինակն անդրադառնում է և՛ ժողովրդական երգիչների դերին արևելյան ազգերի ու նաև հայերի կյանքում, և՛ աշուղների անձնական կյանքի, կենցաղի յուրահատկություններին և՛ աշուղական մրցումներին և՛ աշուղի երգերում նրա կյանքի դրսևորման ձևերին, և՛ աշուղական երգերի գեղարվեստական արժանիքներին ու քնարական առանձնահատկություններին: Այս բազմակողմանի մոտեցման շնորհիվ Լևոնյանը դառնում է մեզանում աշուղական արվեստի տեսության հիմնադիրը: Նա հրապարակայնորեն արժևորում էր աշուղական և առհասարակ միջնադարյան արվեստի մասին ցանկացած ուսումնասիրություն: Փարիզում հրատարակված Արշակ Չոպանյանի ուսումնասիրությունը՝ Նաղաշ Հովնաթանի ու Հովնաթան Հովնաթանյան նկարչի մասին, իբրև մշակութային ու գիտական նշանակալից երևույթ ընկալեցին ու գիրքը գրախոսեցին Հովի. Թումանյանը և Գարեգին Լևոնյանը[8]:

---

[5] Տե՛ս Մուրճ 1894, № 6, 924–926:

[6] Տե՛ս Պատմաբանասիրական հանդես 1970, № 3, 230:

[7] Տե՛ս Ազգագրական հանդես 1903, գիրք 10, 39–93, 1904, գիրք 11, 129–196, գիրք 12, 84–94, գիրք 13, 87–111, **Լևոնյան** 1963, 50–128:

[8] Տե՛ս Ազգագրական հանդես 1911, գիրք 21, 225–239:

Թե՛ գիտական հետաքրքրությունների բերումով, թե՛ արյան կանչով Լևոնյանը չէր կարող չանդրադառնալ իր հոր՝ աշուղ Ջիվանու ստեղծագործությանը: Նա Մոսկվայում հրատարակեց «Հայկական այժմյան քնարերգական բանահյուսությունը և աշուղ Ջիվանին»[9] ուսումնասիրությունը 36 էջի սահմաններում, ուր հայ բանահյուսության պատմության, միջնադարյան ու XIX դարի քնարերգության համապատկերում ներկայացրեց Ջիվանու գրական ժառանգությունը, ստեղծագործության մոտիվները, նրա արվեստի ու ոճի առանձնահատկությունները, նրա դերը հայ աշուղական արվեստի զարգացման գործում: Այնուհետև 1936 թ. կազմելով ու հրատարակելով Ջիվանու երգերի ստվարածավալ ժողովածուն՝ աշուղի կյանքն ու գործը ներկայացնող առաջաբանով, Լևոնյանը կարևոր ներդրում ունեցավ ջիվանագիտության մեջ: Աշուղագիտության հմուտ գիտակը չէր կարող չանդրադառնալ նաև մեծագույն հայ աշուղ-բանաստեղծին՝ Սայաթ-Նովային՝ թե՛ առանձին հոդվածով («Սայաթ-Նովայի խաղերի տաղաչափության մի քանի առանձնահատկությունների մասին»)՝[10] և թե Սայաթ-Նովայի երգերի ժողովածուի գիտական հրատարակությամբ: Պ. Մակինցյանի առաջաբանով՝ իր ժամանակի համար այդ ժողովածուն լիակատար էր, ընդգրկում էր խաղեր Գ. Ախվերդյանի հրատարակությունից , Գ. Ասատուրի հայտնաբերած երգերից և 6 խաղ էլ զանազան այլ աղբյուրներից: Լևոնյանը ոչ միայն գրքի խմբագիրն էր, այլև ներածական տեսության, ծանոթագրությունների ու բառարանի հեղինակը[11]: Ամենուր Լևոնյանն ընդգծում է Սայաթ-Նովայի դերը բանաստեղծական արվեստի, աշուղական տաղաչափական ձևերի զարգացման գործում: 1931 թ. այդ ժողովածուն երևույթ էր գրական կյանքում, որին սպասում էին երկար տարիներ: Ավ. Իսահակյանը 1930 թ. դեկտեմբերի 23-ին Փարիզից գրում է Լևոնյանին. «Անհամբեր սպասում եմ Սայաթ-Նովայիդ լույս տեսնելուն»[12]: Իսկ Ժողովածուն ստանալուց հետո գրում է. «Շատ լավ հրատարակություն է: Լիակատար, սպասված ուսումնասիրություն է քո արածը»[13]:

Գ. Լևոնյանը պատշաճ ներդում ունեցավ նաև հայ գրականության պատմության մեջ՝ հայտնաբերելով որոշակի աղերսներ միջնադարյան տաղեր-

---

[9] Տե՛ս Հանդես գրականական և պատմական 1896, գիրք 7, 280–316:

[10] Սովետական գրականություն 1941, № 2. **Լևոնյան** 1944, 87–98, **Լևոնյան** 1963, 404–414:

[11] Տե՛ս Սայաթ-Նովա 1931, 196:

[12] **Իսահակյան** 2021, 292:

[13] **Իսահակյան** 2021, 310–311:

գության և աշուղական արվեստի միջև: Աշուղական արվեստի առանձնահատկությունները քննելով միջնադարյան գրականության համատեքստում՝ Լևոնյանն իր ուսումնասիրություններում առանձնացրեց XVIII դարի քերական, երաժիշտ ու բանաստեղծ Բաղդասար Դպիրին՝ նրա ստեղծագործության մեջ տեսնելով և՛ միջնադարյան տաղերգուների, և՛ աշուղական երգերի տաղաչափական ձևերի առաջին համադրությունը: Հետևաբար, ըստ Լևոնյանի՝ Բաղդասար Դպիրն է դառնում միջնադարյան տաղերգության և աշուղներին կապող օղակը: Լևոնյանը, Դպիրի մասին իր հոդվածներում կիրառելով կենսագրական մեթոդը, զանազան սկզբնաղբյուրների ուսումնասիրությամբ հայտնաբերելով քերականի կյանքի շատ դրվագներ, ճշգրտելով նրա անձի ու գործի հետ կապված մանրամասներ՝ իր մնայուն տեղն ապահովեց հայ միջնադարյան գրականության հետազոտողների շարքում: Նա դարձավ միջնադարյան տաղերգուի կյանքի ու գրականության, մասնավորապես բանաստեղծի սիրո և բնության երգերի ժամանակի լավագույն արժևորողներից մեկը:

Աշուղագիտությունը Լևոնյանը զարգացրեց նաև «Սոցիալական գաղափարները հայ աշուղական երգերի մեջ»[14], «Հայ ժողովրդական և աշուղական երգեր»[15], «Գ. Ախվերդյան», «Աշուղ Շերամ» հոդվածներով: Աշուղական երգերում Լևոնյանը հայտնաբերում էր ազգային գաղափարաբանություն և հայրենասիրություն: Այդ մասին է վկայում Հայ գրողների կովկասյան ընկերության ամբիոնից կարդացած նրա դասախոսությունը «Աշուղական արվեստը և ազգային հասարակական գաղափարները աշուղական երգերի մեջ» խորագրով[16]:

Լևոնյանի մասնագիտական հետաքրքրությունը աշուղական արվեստի նկատմամբ պահպանվեց մինչև իր կյանքի վերջ: Մահից երեք տարի առաջ տպագրեց «Աշուղները և նրանց արվեստը»[17] ուսումնասիրությունը, որով համակարգեց ու ամբողջացրեց աշուղների մասին գիտական մի ողջ ուսմունք: Այդ ասպարեզում Լևոնյանի ավանդը չի կարող շրջանցել աշուղական արվեստի ու նրա պատմության հետագա ոչ մի ուսումնասիրող:

---

[14] **Լևոնյան** 1963, 229–257:

[15] Տեղեկագիր 1930, № 4, 160–178, **Լևոնյան** 1963, 258–283:

[16] Տե՛ս **Գուլոյան** 1914, Հորիզոն № 25, **Պարույր** 1914, Հովիտ № 6, 93–94:

[17] **Լևոնյան** 1944, 106:

Հայ պարբերական մամուլի ու գրքի պատմագիրը

Գրականության պատմության մյուս բնագավառը, որտեղ Լևոնյանի ավանդը հսկայական է, հայ մամուլի մատենագիտության պատմության ոլորտն է: Երբ 1895 թ. լույս տեսավ Լևոնյանի «Հայ պարբերական մամուլը»[18], պարզ դարձավ, որ հանձին 22-ամյա երիտասարդի հայագիտության ասպարեզ է մտել հմուտ մատենագետ, պարբերական մամուլի նվիրյալ հետազոտող: Այս հանգամանքը նկատեցին նաև ժամանակակիցները և ըստ ամենայնի բարձր գնահատեցին Լևոնյանի աշխատությունը, որը տակավին ձեռագիր վիճակում, արժանացավ Սահակ-Մեսրոպյան մրցանակի: Ուսումնասիրությունը բարձր գնահատվեց նրա առաջին գրոխոսներից մեկի՝ Ավ. Արասխանյանի կողմից[19]: 100-ամյա շրջանի մամուլի պատմագիտական տեսությունը հիացմունքի արժանացավ ամենուր՝ դառնալով ժամանակի հայ գրական կյանքի նշանակալի երևույթ: Իհարկե, եղավ նաև միտումնավոր և կանխակալ մոտեցում: Նկատի ունենք Աբել Ապրեսյանի «Նամակ խմբագրությանը», որտեղ քննադատվում է Լևոնյանի «Հայոց պարբերական մամուլը»[20]:

Մինչ Լևոնյանի աշխատությունը՝ հայ ընթերցողի սեղանին արդեն կային մեր պարբերական մամուլը համակարգված ներկայացնելու փորձեր, սակայն Լևոնյանի ուսումնասիրությունը իր թե՛ ծավալով, թե՛ գիտական համակարգվածությամբ շահեկանորեն տարբերվում էր երկու հոգևոր այրերի աշխատություններից[21]:

Հենց Լևոնյանը հայ պարբերական մամուլի զարգացման ու նրա ուսումնասիրության գործը դրեց առավել լայն ու կայուն գիտական հիմքերի վրա: Ինչպես գրում է Արմինե Հակոբյանը, Լևոնյանի կազմած առաջին «ցանկը, կարելի է ասել, առաջին փորձն է առավել քան ամփոփ ներկայացնելու հայ պարբերական մամուլի անցած փառավոր ուղին»[22]: «Հայ պարբերական մամուլը» առավել լիակատար, արդեն 140 տարվա ընդգրկումով, հայ մամուլի անցած ուղին ներկայացնող ներածականով և աշխատության հանգամանքնե-

---

[18] **Լևոնյան** 1895, 572:

[19] Տե՛ս **Արասխանյան** 1895, Մուրճ № 5, 673–680:

[20] Տե՛ս Մշակ 13.09.1894, № 105:

[21] Տե՛ս **Հարո** (Նիկողայոս Տեր-Հարությունյան) 1878, 135: Հայր **Զարբհանալեան Գարեգին** 1883, 734: Հայր **Գրիգորիս Գալէմքեարեան** 1893, 226:

[22] **Հակոբյան** 2016, Հայագիտական հանդես, 2016, № 4 (34), 118:

ին ու սկզբունքներին վերաբերող առաջաբանով լույս տեսավ 1934-ին՝ Մելքոնյան ֆոնդի հովանավորությամբ[23]:

Հայ մամուլի, գրքի ու տպագրության խնդիրները մշտապես մնացին Լևոնյանի գիտական հետազոտության շրջագծում: Պատահական չէ, որ նրա «Հայ պարբերական մամուլը» լույս տեսավ հայ լրագրության հարյուրամյակի առթիվ: Մամուլի պատմագիրը իր գիտական գործունեության մեջ չէր կարող շրջանցել գրատպության ու հայ գրքի պատմության խնդիրները: 1946-ին լույս տեսավ Լևոնյանի հեղինակած «Հայ գիրքը և տպագրության արվեստը» աշխատությունը, որի գիտապատմական արժեքի մասին Ս. Հարությունյանը գրում է. «Թեպետ հայ գրքի ու տպագրության պատմությանը նվիրվել էին մի քանի աշխատություններ, այն էլ ստվարածավալ, այնուհանդերձ, Լևոնյանի գիրքը աչքի է ընկնում փաստացի նյութի առատությամբ, փաստերի նոր ու թարմ մեկնաբանություններով...Լևոնյանի աշխատությունը մի կարևոր ներդրում էր հայ տպագրության և առհասարակ հայ մշակույթի պատմագրության բնագավառում»[24] :

«Գեղարվեստ»

Մեծանալով ժամանակի անվանի արվեստագետների միջավայրում՝ Լևոնյանը վաղ տարիքից հրապուրվում է և երաժշտությամբ, նկարչությամբ և գրականությամբ: Տարիներ շարունակ, կարևորելով մշակութային պարբերականի հրատարակությունը, նա ձգտում էր իրականություն դարձնել արվեստով հասարակությանը կրթելու իր բաղձանքը: Կոմիտասի հետ համատեղ այդպիսի ամսագիր նախաձեռնելու ծրագրեր էին մշակում դեռևս 1905 թ. Էջմիածնում[25], սակայն «Գեղարվեստ» գրական, երաժշտական, նկարչական պատկերազարդ հանդեսը (1908–1922) իրողություն դարձավ միայն Լևոնյանի ջանքերով ու նրա շնորհիվ: «Գեղարվեստը» նշանակալից դեր ունեցավ արվեստագիտական մտքի ու հայ մամուլի ողջ պատմության մեջ[26]: Եվ ոչ միայն: Հանդեսը իր համեստ դերն ունեցավ ազգային ինքնագիտակցության բարձրացման, զարթոնքի, ճաշակավոր սերունդ դաստիարակելու գործում: Ինքը՝ Լևոնյանը վկայում է. «1908 թ. Թիֆլիսում ձեռնարկեցի «Գեղարվեստ» գրական-արվեստագիտական-երաժշտական հանդեսի հրատարակության: Թե՛

[23] **Լևոնյան** 1934, 230:

[24] Պատմաբանասիրական հանդես 1970, № 1, 233:

[25] Տե՛ս **Լևոնյան** 1963, 7:

[26] Տե՛ս **Գալստյան** 1979, 268:

խմբագրական, թե՛ հրատարակչական ամբողջ հոգսը վերցրել էի ինձ վրա: Նպատակ դրի ժամանակի մեր բոլոր լավագույն գրողներին և արվեստագետներին հրավիրել աշխատակցելու»[27]: Հանդեսի «Մեր ընթերցողներին» վերնագրով ուղերձում խմբագիրը գրում է. «Գեղարուեստը» պէտք է ապրի և ապրելով հանդերձ հետզհետէ առաջադիմէ: Մենք գեղարուեստի սիրու համար դնում ենք այստեղ մեր բոլոր ոյժերը, նիւթական, բարոյական, ֆիզիքական, մեր 12-ժամեայ օրական աշխատանքը»[28]:

Նյութական հնարավորությունները թույլ չտվեցին նախատեսածի պես տարեկան 10 համար հրատարակել, սակայն տասնչորս տարում (1908–1922 թթ) հրատարակվելով ընդամենը յոթ գիրք, այնուամենայնիվ, «Գեղարվեստը» հայ մշակույթի պատմության համար դարձավ մնայուն արժեք:

Լևոնյանն իր առջև խնդիր էր դրել ներկայացնել ոչ միայն արվեստի ժամանակի հայ և թարգմանական լավագույն գործերն ու նրանց մասին վերլուծություններն ու քննադատականները, այլև գիտական պատշաճ մակարդակով բարձրացնել արվեստի տեսության, մշակույթի ու նաև մամուլի պատմության խնդիրները, գեղարվեստի դասավանդման մեթոդիկայի հարցերը և այլն: Այս մասին հավաստում է հանդեսի կառուցվածքն ու բաժինների նույնիսկ ոչ լրիվ թվարկումը՝ «Գեղարվեստի տեսականը», «Գեղարվեստի պատմականը», «Գեղարվեստի գրականը» «Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում», «Մատենախոսական-քննական», «Երաժշտական երկասիրություններ» «Գեղարվեստական նամականի», «Պատկերահանդես» և այլն: Ամսագրի վերտառությունը հուշում էր, որ հանդեսում հիմնականում արծարծվելու են արվեստի խնդիրները: Ընդ որում, գեղագիտական խնդիրներին, գեղեցկություն եզրույթին նվիրված թեմաներով հոդվածների հեղինակը հիմնականում հենց Լևոնյանն էր[29]: Նա հնարավորություն էր ունեցել արվեստի մասին իր գիտելիքները հարստացնել՝ կրթվելով ժամանակի մեծ քաղաքների հմուտ մասնագետների մոտ: Ընդ որում Ռուսաստանում սովորելու կրթաթոշակի համար արդեն երկու աշխատությունների հեղինակ 23-ամյա Գարեգինը բացի Էջմիածնի հոգևոր այրերից, դիմել էր նաև 26-ամյա Հովհաննես Թումանյանին: Վերջինս աջակցում է իր հնարավորությունների սահմաններում՝ դիմելով իշխանուհի Մարիամ Թումանյանին, որն իր հերթին խոստանում է միջնորդել Խրիմյան Հայրիկին: Հայրապետը ընդառաջում է խնդրանքին, և 1896-ին

[27] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 425:

[28] Տե՛ս Գեղարվեստ 1908, № 1, 109:

[29] Տե՛ս Գեղարվեստ 1908, № 1, 1–6:

Լևոնյանը մեկնում է Մոսկվա՝ նկարչություն ուսանելու, այնուհետև 1897-ին ընդունվում և ավարտում է Պետերբուրգի Արվեստների ակադեմիան (1898–1901)՝ որպես Էջմիածնի թոշակառու սան[30], աշխատում է ակադեմիկոս Դմիտրիևի նկարչական արվեստանոցում: Նա իր կրթությունը շարունակում է նաև Լայպցիգում, որտեղ ձեռք է բերում փորագրական արվեստի հմտություններ և արվեստաբանի մասնագիտություն (1906):

Լինելով ժամանակի ամենից կրթված, ազգային գիտությանն ու մշակույթին արդեն իր ներդրումն ունեցած անվանի մտավորականներից մեկը՝ Լևոնյանին հաջողվեց «Գեղարվեստի» շուրջ համախմբել իր օրերի արվեստի, գիտության ու գրականության նշանավոր գործիչներին՝ Հովի. Թումանյանին, Հովի. Հովհաննիսյանին, Մուրացանին, Վրթ. Փափազյանին, Վ. Տերյանին, Ավ. Իսահակյանին և, իհարկե, Կոմիտասին: Լևոնյանի «բազմաձախս ձեռնարկությունը»[31] մեծ խանդավառություն առաջացրեց հայկական գրական շրջանակներում:

«Գեղարվեստի» առաջին համարում առանձին հավելվածով տպագրվել էին հայ մտավորականների ու մշակույթի գործիչների ողջույնի ու խրախուսանքի խոսքերը: Շնորհավորում էին ոչ միայն Թիֆլիսից, Ալեքսանդրապոլից, Կարսից, Մոզդոկից, Երևանից, Էջմիածնից, այլև աշխարհի ամենատարբեր մասերից՝ Ամերիկայից, Փարիզից, Դանիայից, Բելգիայից, Մոսկվայից և Ռուսաստանի այլ վայրերից: Դանիել Վարուժանը գրում է. «Ինքս գեղեցիկի քուրմ մ' ըլլալով՝ կրնաք գուշակել, թե ինչ եռանդ կ'արթննայ մէջս, երբ կը տեսնեմ նմանօրինակ հանդեսներ, որոնք կոչված են ազգիս հաւաքական զգացումները ձևելու, ներդաշնակելու և ուղղելու զանոնք վայրկեան մը սարսափէն՝ երազանքին, և արիւնէն՝ արևուն: Նոյն այս խանդով էր, որ ժամանակ մը հոգիս «Գեղունիի» էջերուն մէջ թրթռաց»[32]: Եվ քանի որ «Գեղունին» ընդմիջումներով էր հրատարակվում և 1906-ին լույս չէր տեսել, Վարուժանը մաղթում է, որ «Ձերինը անոր տեղը բռնէ, ընդլայնելով անոր հորիզոնը,- աշխարհականի հայացքին հորիզոնը»[33]: Շիրվանզադեն, ողջունելով Լևոնյանին Փարիզից, խոստանում էր ֆրանսիական թատրոնի մասին հոդված գրել: Իսկ Վ. Տերյանը գրում էր. «Այն տխուր հանգամանքը, որ արվեստը ոչ մի երկրում, ոչ մի ժողովրդի մեջ այնպիսի բիրտ ու կոպիտ արհամարհանք և անտարբեր ու զոհա-

[30] Տե՛ս ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, № 1, 1489:

[31] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 425:

[32] Գեղարվեստ 1908, թիվ 1, Հավելված, էջ Գ:

[33] Գեղարվեստ 1908, թիվ 1, Հավելված, էջ Գ:

բերումի չի մատնուած որպէս մեր յետամնաց հայրենիքում, ստիպում է մի առանձին ուրախութիւնով ողջունելու Ձեր ձեռնարկությանը»[34]:

«Գեղարվեստը» միջազգային հանդես էր: Տպագրվում էին հայ հեղինակների զանազան հոդվածներ, որոնք ուրվագծում էին արևելքի և արևմուտքի արվեստների պատմությունը: Միաժամանակ արտատպվում և թարգմանաբար հրատարակվում էին ժամանակի՝ արվեստի հայտնի ամսագրերում լույս տեսնող օտարազգի հեղինակների նյութերը, այդ թվում ֆրանսիացի կոմպոզիտոր, կոնսերվատորիայի հարմոնիայի դասախոս, Փարիզի համայնքային դպրոցների երգի ծրագրի գլխավոր պատասխանատու, պրոֆեսոր Օգյուստ Շափյուի («Երաժշտական արուեստը դպրոցում»)[35], Ֆրանսիայի Դեկորատիվ արվեստի ազգային դպրոցի պրոֆեսոր Գաստոն Քենիուի («Նկարչութիւնը դպրոցում եւ ճաշակի դաստիարակութիւնը»)[36], Պրոֆ. Օրշանսկու («Նկարչություն և քանդակագործություն», «Երաժշտական ստեղծագործություններ»)[37] Յանովսկու («Քանդակագործութիւն, նկարչութիւն և երաժշտութիւն)[38], Վ.Ա. Մարքիզ Տրեսսանի («Իսլամական նկարչություն»)[39]և այլազգի այլ հեղինակների հոդվածներ:

Խմբագիրը

Հանդեսի խմբագիրը հոդվածներ ուներ բոլոր ուղղությունները ներկայացնող բաժիններում, և հենց «Գեղարվեստի» էջերում դրսևորվեց Լևոնյանի գիտական բազմակողմանի օժտվածությունը, մեծ ներդրումը հայագիտության տարբեր ոլորտներում: Ընթերցողը նրա հոդվածների միջոցով էր ծանոթանում գեղագիտական հարցերի, գեղեցիկի, արվեստում ռեալիզմի ու իդեալիզմի, սիմվոլիզմի դրսևորումներին («Իդեալիզմը և ռեալիզմը գեղարուեստի մէջ» (1911, № 4), «Իդեալիզմ, ռեալիզմ, սիմբոլիզմ», «Հայոց գեղարուեստի պատմութեան ներածութիւնը» (1913, № 5)), պատկերացում կազմում հայ միջնադարյան նկարչության, մանրանկարի ոճի մասին («Ուրուագիծ միջնադար-

[34] Գեղարվեստ 1908, թիվ 1, Հավելված, էջ Բ:

[35] Տե՛ս **Շափյու Օգյուստ** 1908, Գեղարուեստ 1908, № 2, 82–87: Օգյուստ Շափյուի հոդվածը արտատպվել էր 1908 թ. Փարիզի «Արվեստը դպրոցում» գրքից (**Chahpuis** 1908, 109–112).

[36] **Քենիուի Գաստոն** 1913, Գեղարվեստ, 1913, № 5, էջ 133–137: Հոդվածն արտատպվել էր «Արվեստը դպրոցում» գրքից (**Quénioux** 1908, 89–108).

[37] Գեղարվեստ 1908, № 2, 11–23:

[38] Գեղարվեստ 1909, № 3, 20–24:

[39] Գեղարվեստ 1921, № 7, 55–65:

եան հայ նկարչութեան.Ներածութիւն» (1908, № 1), («Ուրուագիծ միջնադարեան հայ նկարչութեան. Մանրանկարի ոճը», (1911, № 4)), թերթում թատրոնի, մամուլի («Գեղարվեստական հայ մամուլը նախքան «Գեղարուեստը» (Թռուցիկ հայեացք)» (1908, №1)), երաժշտության, ճարտարապետության պատմության նորանոր էջեր («Հայոց գեղարուեստի պատմութեան ներածութիւնը» (1913, № 5)) և այլն:

Լևոնյանը նաև գրաքննադատ էր և ձեռքը պահում էր ժամանակի գրականության զարկերակի վրա: Միայն «Գեղարվեստում» տպագրվեցին Լևոնյանի գրախոսականները Շուշանիկ Կուրղինյանի «Արշալոյսի ղողանջների» (1908, № 1), Գաբրիել Սունդուկյանի «Բաղնիսի բոխչա» կատակերգության (1908, № 2), Լևոն Լարենցի «Դրախտի երգեր» Ա. Անկումէն առաջ, Բ. Անկումէն յետոյ (1908, № 2), Ցագարելու «Սիբիրական» կատակերգության (1908, № 2) մասին: 1400 տպաքանակ ունեցող «Գեղարվեստը» այնպիսի մեծ համարում ու հեղինակություն ուներ գրական շրջաններում, որ նրանում տպագրված հոդվածները առանձին ուսումնասիրության էին արժանանում. հանդեսի նյութերի քննությանը նվիրված առանձին գրախոսականներ էին տպագրվում: Ն. Աղբալյանի, Վարդգես Աիարոնյանի, Հ. Բժշկյանի, Արշակ Վարդանյանի այդ քննադատականներում ընդգծվում էր և՛ դրականն ու արժեքավորը, և՛ միաժամանակ արվում էին դիտողություններ[40]:

«Գեղարվեստի» Ա գրքի համար խմբագիրը ստացավ հայ գրողների լավագույն ստեղծագործությունները՝ Հ. Թումանյանի «Հայոց վիշտը», Ավ. Իսահակյանի «Երազը», «Կարոտը», Հովհ. Հովհաննիսյանի «Վահագնի ծնունդը», Վ. Տերյանի «Ցնորքը» և այլն: Հանդեսում իր տեղն ուներ նաև արտասահմանյան գրականություն՝ Բալմոնտ, Բաբա Թահիր և այլն: Հետագայում Թումանյանը այնքան բարձր էր գնահատում «Գեղարվեստը», որ նոր գործ տալու Լևոնյանի դիմումներին՝ պատասխանում էր. «Ամեն բան չի կարելի տալ «Գեղարվեստին»»[41]:

Հանդեսի խմբագրական ժողովներին մասնակցել են Հովհ. Թումանյանը, Դ. Դեմիրճյանը, Հ. Հակոբյանը, Ավ. Իսահակյանը, Ա. Տիգրանյանը և ուրիշներ: Ուշագրավ է, որ գրական բաժնի համար ստացված նյութերը կարդում էին առանց հեղինակների անունները տալու՝ ընկերների անաչառ դրական թե բացասական կարծիքները ստանալու նպատակով: Հայտնի է, թե

[40] Տե՛ս Հորիզոն 1910, № 132, 1912, № 76–77, 1912, № 115, 1917, № 6, 1918, № 212, 214, Սուրհանդակ 1910, № 122, 1912, № 497–498, № 502–503, Հովիտ 1910, № 7, 11:

[41] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 425:

ինչպիսի մեծ աշխուժություն է առաջացրել Վարուժանի «Ո՜վ Լալագէ»[42] բանաստեղծության ընթերցումը: Ներկաները ամենքն էլ ընդունել են գրվածքի արժանիքը, ոճի, պատկերների գունագեղությունը, սակայն ձեռնպահ են մնացել տպագրելու որոշումը կայացնելիս: Իսկ Թումանյանը, ընդունելով Վարուժանին «որպես մեծ բանաստեղծի», դեմ չէր տպագրությանը, սակայն կանխազգում էր, որ Լևոնյանը մեծ պատասխանատվություն է վերցնում իր վրա և հարձակումներն անխուսափելի կլինեն: Առաջինը Շիրվանզադեն էր, որ ընկնելով ծայրահեղության մեջ՝ քննադատում է Լևոնյանին՝ «Գեղարվեստի» 4-րդ գրքի առիթով գրելով երկու քննադատական: «Բողոքում եմ զզվանքով» հոդվածում նա մեղադրում է Լևոնյանին Արամ Չարըգի «մոդեռնիզմը կապկող» «Աղջիկ մը» ոտանավորի տպագրության համար, իսկ «Ահա մի ուրիշը» հոդվածում նկատի ունենալով «Ո՜վ Լալագէն»՝ մեղադրում է Լևոնյանին «պոռնոգրաֆիա» տպագրելու համար[43]: «Վերջին տարիները մոդեռնիզմի հայ կապիկները աշխատում են հայ կուսական գրականությունն ապականել այնպիսի «բանաստեղծական» մոտիվներով, որոնք նողկանք կարող են պատճառել քիչ թե շատ կիրթ ճաշակ ունեցող ամեն մի ընթերցողի,- գրում է Շիրվանզադեն...- զայրանում եմ ոչ այնքան հեղինակների երևակայության, սնանկության, ճաշակի կոպտության և զգացումների անմաքրության դեմ, որքան այդ հանդեսների խմբագիրների դեմ, որոնք չեն քաշվում տպել այդ տեսակ հակագեղարվեստական գոհարներ: Այս անգամ գեղարվեստի ամոթխածության դեմ մեղանչողը ինքը՝ գեղարվեստն է, այսինքն՝ պ.Լևոնյանի «Գեղարվեստը»»[44]: «Ահա մի ուրիշը» հոդվածում Վարուժանի բանաստեղծությունը Շիրվանզադեն անվանում է «ավելի զազրելի» և նկատում է, որ «Դանիել Վարուժանի պես էրոտոմանները մեզ իրանց պոռնկության նմուշները ծախում են բանաստեղծության տեղ[45]: Ծավալվում է բանավեճ, որտեղ Շիրվանզադեին պատասխանում են Վ. Ահարոնյանը (Վ. Մենակ)[46], Արսեն Տերտերյանը և Հակոբ Հակոբյանը[47]: Բանավեճը դուրս է գալիս Թիֆլիսի սահմաններից: Էջմիածնի «Արարատն» է տպագրում Գ. Ալթունյանի գրախոսականը

[42] «Ո՜վ Լալագե»-ն տպագրվեց Գեղարվեստ 1911, № 4, 62–63:
[43] Տե՛ս **Շիրվանզադե** 1962, 474:
[44] **Շիրվանզադե** 1962, 723:
[45] **Շիրվանզադե** 1962, 476:
[46] Տե՛ս Հորիզոն, 1912, № 76, 79:
[47] Հորիզոն 1912, № 87, 88:

«Գեղարվեստի» 4-րդ գրքի մասին, որտեղ հատուկ անդրադարձ է կատարվում Վարուժանի ստեղծագործությանը[48]:

«Գեղարվեստի» պատմությունից այս դրվագը ցուցադրում է Լևոնյան խմբագրի և՛ լայնախոհությունը, խմբագրական ժողովներին նրա՝ միայն արվեստի ու գրականության շահերից ելնող մոտեցումները, և՛ ոլորտի հեղինակավոր անձանց ականջալուր լինելը և՛ միաժամանակ ինքնուրույն որոշումներ կայացնելը, համարձակությունը գրական նորարարական հոսանքներին ընդառաջ գնալու գործում: Շիրվանզադեի հետ գրական ուղղությունների հարցում տարաձայնությունները շարունակվում են նաև հետագայում: Լևոնյանի «Ահա և իմ պատասխանը» հոդվածը գրվում է դրամատուրգի հետ ռեալիզմի ու նատուրալիզմի մասին բանավեճի շրջանակում[49]: «Գեղարվեստի» խմբագրին Շիրվանզադեն պատասխանում է «Իմ վերջին խոսքը» հոդվածով[50]: Բանավեճի առարկան ռեալիստական մոտեցմամբ գեղեցիկի և ճշմարտի հարաբերակցության խնդիրն էր: Լևոնյանը համոզված էր, որ ամեն մի ճշմարիտ դեռևս գեղեցիկ չէ, իսկ Շիրվանզադեն նույնացնում է այդ երկու հասկացությունները՝ բանաձևելով «Չկա գեղեցկություն առանց ճշմարտության, չկա ճշմարտություն՝ առանց գեղեցկության»[51]:

Մանկավարժը

Արվեստի քաղաքակրթական դերի, արվեստով ազգեր, հասարակություններ կրթելու անհրաժեշտության գիտակցումը Լևոնյանին տարավ մանկավարժության ոլորտ, ընդ որում թե՛ այդ մասին հանրությանը տեսական գիտելիքներ հաղորդելու, թե՛ գործնական քայլեր կատարելու առումով: Իր մանկավարժական գործունեությունը Լևոնյանը ծավալել է նախ Էջմիածնում՝ Գևորգյան ճեմարանում դասավանդելով գեղարվեստի տեսություն և նկարչություն (1903–1906): Այնուհետև Թիֆլիսում բացել է նկարչական դասընթացներ և կրթել նկարչության ապագա ուսուցիչներ, 1910–1911 թթ. դասավանդել է Ներսիսյան դպրոցում (1910–1911), 1926–1928-ին՝ Երևանի գեղարվեստական տեխնիկումում, այնուհետև դասախոսել է Երևանի բարձրագույն ուսումնական հաստատություններում՝ Գեղարվեստաթատերական ինստիտուտում, Երևանի պետական համալսարանում: Արվեստների դերը, գեղեցիկի սերմա-

[48] Արարատ 1915, № 5–6, 525–538:
[49] Մշակ 1917, №№ 20, 23, 24:
[50] Մշակ 1917, № № 26, 27: Տե՛ս նաև **Շիրվանզադե** 1962, 559:
[51] **Շիրվանզադե** 1962, 561:

նումն ու գեղագիտական բարձր ճաշակի ձևավորումը Լևոնյանը կարևորում էր հատկապես սերունդների դաստիարակության հարցում: Մանկավարժ Լևոնյանը հեղինակեց նաև գեղագրություն, նկարչություն և վայելչագրություն առարկաների դասագրքեր[52]:

Հանդեսի «Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում» բաժնում զետեղված հոդվածներում արտացոլվում էին երեխայի գեղագիտական դաստիարակության մասին Գ. Լևոնյանի, Հովհաննես Ակունյանի, Արտաշես Տիրացյանի և եվրոպական արվեստաբանների՝ Օգյուստ Շափյուի, Գաստն Քենիուի մոտեցումները մանկան գեղագիտական հայացքների ձևավորման ու զարգացման հարցում: Բաժնի վերնագիրն անգամ հուշում է, թե մասնավորապես Լևոնյանը որքան էր կարևորում երեխայի գեղագիտական դաստիարակության հարցում դպրոցին զուգահեռ նաև ընտանիքի դերը: Իսկ կրթել ընտանիքը, նշանակում էր կրթել ողջ հասարակությունը. այդ կրթության լավագույն միջոցներից մեկն էլ Արևմուտքի փորձի կիրառումն էր հայկական դպրոցներում: Մանկավարժական իր հայացքներն արտահայտելիս ինքը Լևոնյանը վկայակոչում էր ֆրանսիացի մանկավարժ Մարսել Բրաունշվիգի աշխատություններից «Արվեստը և երեխան. ակնարկ գեղագիտական կրթության մասին» ուսումնասիրությունը[53]: Նրա կարծիքով երաժշտություն ու նկարչություն առարկաները «զարգացնելու են մատաղ հասակի լսողութիւնն ու տեսողութիւնը, զարգացնելու են յիշողութիւնը, գեղեցիկի ճաշակը, ազնուացնելու են նրա հոգին և բարքը»[54]: Հանդեսի խմբագիրը ընթերցողի հետ անմիջական կապի՝ նամակագրության միջոցով հնարավորություն էր ընձեռել յուրաքանչյուր ուսուցչի կամ աշակերտի մեթոդական ցուցումներ ստանալ խմբագրությունից: Մանե Մկրտչյանը իր «Գեղարվեստական կրթության հարցերը «Գեղարվեստ» հանդեսի էջերում» հոդվածում նկատում է. «Ակնհայտ է, որ Գ. Լևոնյանը ոչ միայն բարձրաձայնում էր գեղարվեստական կրթության ասպարեզում առկա խնդիրները, այլև նպատակ էր հետապնդում գոնե տեսական առումով որոշ բացեր լրացնել»[55]: Հոդվածագիրը իրավացիորեն հավելում է, որ հանդեսի ««Գեղարվեստը ընտանիքում և դպրոցում» բաժինն առանձնանում է թե՛ գա-

[52] Տե՛ս **Լևոնյան** 1908, **Լևոնյան** 1909:
[53] Տե՛ս **Braunshvig** 1907.
[54] Գեղարվեստ 1908, № 1, 69:
[55] **Մկրտչյան** 2020, Պատմաբանասիրական հանդես № 1, 143:

ղափարական առումով, թե՛ հոդվածների արդիականությամբ ու բարձրացվող խնդիրների կարևորությամբ»[56]:

Հուշագիրը

Հուշագրությունը կարևոր բնագավառ է գրողի և առհասարակ գիտության ու արվեստի մեծերի կյանքի ու ստեղծագործության ներթափանցումը, նրանց կենսապատումը ներկայացնելու գործում: Հուշերի միջոցով, մանավանդ եթե հուշագիրը նշանավոր անձ է, ոչ միայն բացահայտվում են տվյալ հուշագրի կամ անձի կյանքի որոշ մանրամասները, նկարագիրը, նրա ներկայացրած, այլև պատմության սեփականությունն են դառնում կոնկրետ անհատի ժամանակն ու միջավայրը: Հուշագրության ու գրական ստեղծագործության ներդաշնակ միասնություն է ուղեգրության ժանրը: Անվանի հայագետը թե՛ ուղեգրության, թե՛ հուշագրության ասպարեզում նույնպես ստեղծել է ուշագրավ երկեր: 1912–1913 թթ. Լևոնյանը ճամփորդել է Արևմտյան Եվրոպայում և իր տպավորությունները ամփոփել է «Աշխարհե-աշխարհ կամ 20.000 վերստ Եվրոպայում» ուղեգրությունների մեջ: Լևոնյանի հուշերը նաև իր ժամանակի վավերագրերն են, Կոմիտասի, Թումանյանի, Շիրվանզադեի և այլ նշանավոր անձանց կյանքի վավերագրերը: Դրամատուրգի մասին հուշերում շեշտում է, որ չնայած մամուլում գրական հարցերի շուրջ միմյանց դեմ նիզակներ էին ճոճում, բայց մնում էին լավ բարեկամներ: Կոմիտասի հետ ծրագրեր մշակելու մասին խոսելիս հիշում է, թե ինչպես էջմիածնում հանդես բացելու դիմումը մերժեց Երևանի նահանգապետը և այլն:

Միայն Հովհաննես Թումանյանի մասին հուշերը բավական են պատկերացում կազմելու Լևոնյան հուշագրի մասին: Այստեղ իսպառ բացակայում են անձնական սուբյեկտիվ գնահատականներն ու մեկնությունները, ես-ի շեշտադրումը, փաստերը ըստ ինչ-ինչ անհատական ու քաղաքական նպատակների հարմարեցնելը և այլ հատկանիշներ, որոնք կարող են թերահավատություն ներշնչել նկարագրված իրողությունների հավաստիության նկատմամբ: Ամենայն հայոց բանաստեղծի մասին Լևոնյանի հուշերում հառնում է Թումանյանի մարդկային կերպարը՝ իր ողջ հմայքով: Բանաստեղծը ներկայանում է իբրև ազգային գործիչ, գրական մշակութային կյանքի ղեկավար՝ Հայ գրչի մշակների, Հայարտան, ՀՕԿ-ի նախագահ, իբրև մեծ հաշտարար, որ կարողանում էր հակառակորդ դարձած մշակույթի գործիչներին՝ Ղ. Աղայանին ու Պ. Պռոշյանին, Լեոյին ու Ավ. Իսահակյանին, Հակոբ Գենջյանին ու Աթ.

[56] **Մկրտչյան** 2020, Պատմաբանասիրական հանդես № 1, 146:

Խնկոյանին հաշտեցնել, կարողանում էր ապահովել մշակութային կյանքի ներդաշնակությունը: Հուշագիրը ընդգծում է բարերար Թումանյանի նրբանը-կատությունը, աննկատ, առանց արժանապատվությունը վիրավորելու «թաքուն» «բարձի տակ»[57] գումար թողնելու սովորությունը: Երբ աղքատությունը թակում էր յուրաքանչյուր հայի դուռը, Թումանյանը միջոցներ էր գտնում գրողներին ու արվեստագետներին ինչ-որ չափով պարենով ապահովելու, դրա համար էլ արվեստից ու գրականությունից հեռու շատերն էին անդամագրվում նրա նախագահած ընկերություններին և Լևոնյանի խոսքերով Հայարտունը դառնում էր Հացառտուն, իսկ Գրչի մշակների միությունը՝ Գրչակոթների միություն:

Հուշագրության ժանրին բնորոշ է հենց հուշագրի անձնական կյանքի ինչ-ինչ դրվագների ներկայացում, սակայն Լևոնյանը շատ ավելի ընդգծում է ծնողների ու Թումանյանի առնչությունները: Գարեգինի մայրը Թումանյանի «խրախուսանքով» 65-ամյա հասակում «սկսում է զբաղվել գրականությամբ»: Լևոնյանը հիշում է, որ մի առիթով, երբ բանաստեղծն իրենց տանն էր, մայրը նրա համար գրի առած հայկական հեքիաթ է կարդում՝ «Ոսկի մազերով աղջիկը»: Թումանյանը առաջարկում է շարունակել գրի առնել այդպիսի հեքիաթներ և առանց մշակելու որպես նյութ տրամադրել գրողներին: Լևոնյանը գրում է. «Այս խոսակցությունից հետո մայրս մինչև իր մահը զբաղվում էր «գրականությամբ».... ժամերով կռացած գրում էր ու գրում. երբ նկատողություն էինք անում, որ թողնի այդ պարապմունքը, նա վշտանում էր. «Ընչի չեք թողնի գրեմ, դուք Թումանյանից լա՞վ գիտեք, ինչը պետք է, ինչը պետք չէ»»[58]:

Լևոնյանի հուշերում անջնջելի հետք են թողել հոր՝ Ջիվանու թաղման օրը (1909 մարտի 1) Մետեխի բանտի պատուհաններից երկու թաշկինակների թափահարումը, որը գրավել էր բոլոր հուղարկավորների ուշադրությունը. «Նայում եմ և ո՞ւմ տեսնեմ- Հովի. Թումանյանին և Ավ. Իսահակյանին, որոնք, ձեռները լուսամուտի երկաթյա վանդակից դուրս հանած, թափահարում էին թաշկինակներով, իբր իրենք ևս մասնակից են հուղարկավորության և սգահանդեսին: Այդ ինձ համար մեծ մխիթարություն էր»[59]:

Թումանյանի մասին հուշերում նկատվում է Լևոնյան հուշագրի ևս մի առանձնահատկություն, որը փաստում է հուշերի հեղինակի գիտնական լինե-

[57] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 436:
[58] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 433:
[59] Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, 433:

լը: Նա կատարում է թեմատիկ բաժանումներ հուշի յուրաքանչյուր մաս վերնագրում և ասելիքը ներկայացնում էր համակարգված: Միայն Թումանյանի մասին հուշը ունի 18 ենթավերնագիր՝ «Ռաֆֆու բնակարանում», «Թումանյան և Վարուժան», «Թումանյանը հաշտարար» և այլն:

Եզրակացություններ

Քսաներորդ դարասկիզբը հայ մշակույթի ու հայագիտության ոսկեդարն էր, և Գարեգին Լևոնյանն այդ արգասաբեր շրջանի լավագույն հայագետների շարքում իր մնայուն տեղն ունի: Հսկայական է նրա ավանդը հայ բանասիրության, արվեստաբանության զարգացման գործում: Թեև մեծ են Գ. Լևոնյանի ներդրումները հայագիտության ամենատարբեր բնագավառներում, նրա տարերքը, սակայն, մամուլի պատմությունն էր, աշուղագիտությունը՝ ոլորտներ, որոնցում Լևոնյանը ստեղծեց մնայուն արժեքներ: Նրա կազմած ժամանակագրական մայր ցուցակները՝ հայ լրագրության 140-ամյա շրջանի նյութի ընդգրկման լիակատարությամբ, մատենագիտական տվյալների մատուցման կատարելությամբ, հայագիտությանը մատուցած նրա անգնահատելի ծառայության հավաստումն են:

Արվեստաբանի, գրականագետի, մամուլի պատմագրի և խոշոր հայագետի ուսումնասիրությունները հասցեագրված էին ոչ միայն գիտական շրջանակներին, այլև ողջ հանրությանը: Բացի հայագիտության ոլորտի նշանավոր գիտնական լինելուց, նա նաև ազգային արվեստի ու գրականության հանրահռչակողներից էր՝ և նրա ողջ գործունեությունն ուղղված էր մշակույթի ու գեղարվեստի դաստիարակության միջոցով ազգային ինքնագիտակցության բարձրացմանը: Աշխարհի ամենահեղինակավոր բուհերում կրթված և արվեստաբանի կոչումով հայրենիք վերադարձած Լևոնյանը իրականացրեց գեղարվեստական ճաշակ հղկելու և բարձրացնելու իր առաքելությունը այնքան, որքան թույլ տվեց իր ժամանակը: Իսկ այդ ժամանակը լի էր պատմական ահավոր ու ողբերգական ցնցումներով, պատերազմներ, ցեղասպանություն, հեղափոխություններ, հետևաբար նա արեց անհնարինը, ինչպես մեր հայագիտության մյուս մեծերը: Այսօր էլ Գարեգին Լևոնյանի դերակատարումը հայագիտության մեջ գնահատվում է հավուր պատշաճի: Նրան անվանում են «շնչավոր հանրագիտարան», «վերարթնացման առաքեալ»[60]:

[60] Ազատ օր, 6.11.2018:

Իր նորարարական հետազոտություններով մեծանուն հայագետը իր տաղանդավոր սերնդակիցների հետ վերահաստատեց հայ ազգի գոյության իրավունքը:

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ազատ օր 2018, օրաթերթ, Աթենք, նոյեմբերի 6:

Ազգագրական հանդես 1903, Թիֆլիս, ազգագրական պատկերազարդ կիսամյա պարբերական, գիրք 10, էջ 39–93, 1904, գիրք 11, էջ 129–196, գիրք 12, էջ 84–94, գիրք 13, էջ 87–111:

Ազգագրական հանդես 1911, գիրք 21, էջ 225–239:

Ալթունյան Գ. 1912, Գեղարվեստ, Չորրորդ տարի, 1911, Արարատ ամսագիր, Էջմիածին, թիվ 5–6, էջ 525–538:

Արասխանյան Ա. 1895, Լևոնյանց Գարեգին: Ջիվանի: Հայոց պարբերական մամուլը, Մուրճ, Թիֆլիս (1889–1907), № 5, 673–680:

Գեղարուեստ 1908, գրական, գեղարուեստական, երաժշտական պատկերազարդ հանդէս խմբագրութեամբ Գարեգին Լեւոնեանի. Առաջին տարի, Մարտ, Թիֆլիս, տպ. «Ելեքտրաշարժ» Օ.Ն. Աղանեանցի (Պօլից 7), № 1, էջ 1–6, 69, 109 Հավելված, էջ Բ, Գ, №2, էջ 82–87, 11–23:

Գեղարվեստ 1909, № 3, էջ 20–24:

Գեղարվեստ 1911, №4, տպ. Մ. Մարտիրոսյանցի, №3, էջ 62–63:

Գեղարվեստ 1913, № 5, արտասահմանյան բացառիկ №1, Վենետիկ, տպ. Մխիթարեան, էջ 133–137:

Գեղարվեստ 1921, № 7, տպ. Սովնարխոզի, (Պուշկին №3), էջ 55–65:

ԳԱԹ, Գ. Լևոնյանի ֆոնդ, թիվ 1489:

Գալէմքեարեան Գր. 1893, Պատմութիւն հայ լրագրութեան. ի սկզբանէ մինչեւ մեր օրերը հ. Ա, Վիեննա, Մխիթ. տպ., 226 էջ:

Գալստյան Թ. 1979, Գարեգին Լևոնյանը և «Գեղարվեստ» հանդեսը, Երևան, ԵՊՀ հրատ., 268 էջ:

Գուլոյան Ա. 1914, Հայ գրողների կովկասյան ընկերության երեկույթները (29-րդ երեկույթ). Գ. Լևոնյանի բանախոսությունը. Հորիզոն, 1914, № 25:

Զարբհանալեան Գ. 1883, Հայկական մատենագիտութիւն: Այբուբենական ցուցակ տպագր. գիւտէն մինչև առ մեզ եղած հայերէն հրատարակութեանց: 1565–1883, Վենետիկ. 734 էջ:

Թումանյանը ժամանակակիցների հուշերում 2019, լրամշակված հրատարակություն, հ. 1, Երևան, ՀՀ ԳԱԱ Մ.Աբեղյանի անվ. գրակ. ինստ. և ԹԹ հրատ., 624 էջ:

Իսահակյան Ավ. 2020, ԵԼԺ 14 հատորով, հ. 11, Հուշեր, հոդվածներ գրականության և արվեստի մասին, գրախոսություններ, ելույթներ, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., 810 էջ:

Իսահակյան Ավ. 2021, ԵԼԺ 14 հատորով, հ. 14, Նամակներ (1924–1957), Երևան, Էդիթ-Պրինտ հրատ., 1136 էջ:

Լևոնյան Գ. 1892, Հայ աշուղներ, Ալեքսանդրապոլ, Գ. Սանոյանցի տպ., 151 էջ:

Լևոնյան Գ. 1895, Հայոց պարբերական մամուլը, Ալեքսանդրապոլ, տպ. Աբ. Մալխասեան, 570 էջ:

Լևոնյան Գ. 1905, Գծագրություն և նկարչություն, մաս 1, Թիֆլիս, «Կուլտուրա», 56 էջ:

Լևոնյան Գ. 1908, Հայկական վայելչագրություն և գեղագրություն դպրոցների և ընտանիքների համար, տետրակ Ա, Գալստյան մատենաշար, 25 էջ:

Լևոնյան Գ. 1908, Հայկական վայելչագրություն և գեղագրություն դպրոցների և ընտանիքների համար, տետրակ Բ, Գալստյան մատենաշար, 25 էջ:

Լևոնյան Գ. 1908, Հայկական վայելչագրություն և գեղագրություն դպրոցների և ընտանիքների համար, տետրակ Գ, Գալստյան մատենաշար, 25 էջ:

Լևոնյան Գ. 1909, Գծագրություն և նկարչություն, մաս 2, Թիֆլիս, «Կուլտուրա», 60 էջ:

Լևոնյան Գ. 1914, Աշխարհե-աշխարհ կամ 20.000 վերստ Եվրոպայում, հ. 1, Թիֆլիս, «Հերմես», 32 էջ:

Լևոնյան Գ. 1934, Հայոց պարբերական մամուլը: Լիակատար ցուցակ հայ լրագրության սկզբից մինչև մեր օրերը (1794–1934), Երևան, հրատ. Մելքոնյան ֆոնդին, 230 էջ:

Լևոնյան Գ. 1941, Թատրոնը հին Հայաստանում, Երևան, Հայպետհրատ, 122 էջ:

Լևոնյան Գ. 1944, Աշուղները և նրանց արվեստը, Երևան, Հայպետհրատ, 106 էջ:

Լևոնյան Գ. 1958, Հայ գիրքը և տպագրության արվեստը, Երևան, Հայպետհրատ, 255 էջ:

Լևոնյան Գ. 1959, Հուշեր, Երևան, Հայպետհրատ, 203 էջ:

Լևոնյան Գ. 1963, Երկեր, Երևան, Հայպետհրատ, 504 էջ:

Հակոբյան Ա. 2016, Հայ պարբերական մամուլի մատենագիտական կարևոր հրատարակություններ (XIXդ երկրորդ և XXդ. առաջին կեսերին), Հայագիտական հանդես, № 4 (34), էջ 118:

Հանդես գրականական և պատմական 1896, գիրք 7, Մոսկվա, տպ. Ք. Բարխուդարյանի, էջ 280–316:

Հարո (**Նիկողայոս Տեր-Հարությունյան**) 1878, Հայոց մամուլը Ռուսաստանում եւ Կովկասի մէջ, Թիֆլիս, 135 էջ:

Հովիտ 1910, ազգային հասարակական գրական շաբաթերթ (1910-1917), Թիֆլիս, տպ. Վրաց. Հրատ ընկ. № 7, էջ 11:

Հովիտ 1914, №6, էջ 93–94:

Հորիզոն 1910, Հասարակական գրական օրաթերթ, Թիֆլիս, տպ. «Печатное дело», Կիլաձեի (Վելյամինովսկայա փող.), № 132:

Հորիզոն 1912, №№ 76, 79, 76–77, 115:

Հորիզոն 1914, № 25:

Հորիզոն 1917, № 6:

Հորիզոն 1918, №№ 212, 214:

Մկրտչյան Մանե 2020, Գեղարվեստական կրթության հարցերը «Գեղարվեստի» էջերում, Պատմաբանասիրական հանդես, № 1, էջ 143:

Մշակ, 1894, գրական քաղաքական շաբաթաթերթ, Թիֆլիս, տպ. «Ծերեթելի և ընկերության», № 105:

Մշակ 1914, Քաղաքական և գրական լրագիր, Թիֆլիս, տպ. «Экономя» Большая-Ванская փող., №№ 36, 139, 140:

Մշակ 1917, №№ 20, 23, 24, 26, 27:

Մուրճ 1894, քաղաքական-հասարակական-գրական ամսագիր (1889–1907) Թիֆլիս, տպ. Մ.Դ. Ռստինեանցի (Գոլովինյան փող. № 41) № 6, էջ 924–926:

Մուրճ 1895, № 5, էջ 673–680:

Շափյու Օգյուստ 1913, Երաժշտական արուեստը դպրոցում, «Գեղարվեստ», Վենետիկ, № 5, էջ 133–137:

Շիրվանզադե 1962, Երկերի ժողովածու տասը հատորով, հ. 10, Երևան, Հայպետհրատ, 723 էջ:

Պատմաբանասիրական հանդես 1970, Երևան, ՀԽՍՀ ԳԱ հրատ., №3, էջ 230, 233:

Պատմաբանասիրական հանդես 2020, Երևան, ՀՀ ԳԱԱ հրատ., № 1, էջ 143:

Պարույր 1914, Հայ գրողների հերթական 29-րդ երեկույթը,Հովիտ, № 6, 93–94:

Սայաթ-Նովա 1931, Հայերեն խաղերի լիակատար ժողովածու. Ներածություն Գ. Լևոնյանի, Առաջաբան Պ. Մակինցյանի, Երևան, Հայպետհրատ, 196 էջ:

Սովետական արվեստ 1957, օրգան Հայկական ՍՍՌ մինիստրության, Երևան, №11, էջ 71:

Սովետական գրականություն 1941, գրական-գեղարվեստական տեսական-քննադատական հանդես, Հայսաստանի սովետական գրողների միության օրգան, Երևան, № 2, էջ 61–65:

Սուրհանդակ 1910, գրական, քաղաքական-հասարակական և առևտրա-արդյունաբերական անկախ լրագիր, Թիֆլիս, տպ. «Կուլտուրա», № 122:

Սուրհանդակ 1912, №№ 497–498, 502–503:

Տեղեկագիր ՀԽՍՀ գիտության և արվեստի ինստիտուտի, 1930, Երևան, №4, էջ 160–178:

Քենիու Գաստոն 1913, Նկարչութիւնը դպրոցում եւ ճաշակի դաստիարակությունը, «Գեղարվեստ», № 5, Վենետիկ, Մխիթարյան տպ. էջ 133–137:

Костанян К. 1913, Летопись на камнях. Сост. К. Костанян. Предисловие (на русском языке) Н. Я. Марра. СПб., изд. Импер. акад. наук, 1913.

Braunshvig M. 1907, L'art et l'enfant: essai sur l'education esthntique, Toulouse. Paris.

Chahpuis 1908, L'Art musical à l'école.– L'Art à École, par MM. Couyba, Léon Riotor, Frantz Jourdain. Paris, pp. 109–112.

Quénioux, Gaston 1908, Le Dessin a l'école et l'Éducation du goût. – L'Art à École, par MM. Couyba, Léon Riotor, Frantz-Jourdain, Paris: Larousse, pp. 89–108.

ПОДВИЖНИК АРМЯНСКОЙ КУЛЬТУРЫ (ОЧЕРК АРМЕНОВЕДЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ ГАРЕГИНА ЛЕВОНЯНА)

ОВАНЕСЯН С.

Резюме

Ключевые слова: Гарегин Левонян, арменоведение, «Гехарвест», ашуговедение, книгопечатание, Багдасар Дпир, мемуаристика.

Начало двадцатого столетия было «золотым веком» армянской культуры и арменоведения, и Гарегин Левонян занимает особое место в ряду лучших учёных-арменоведов той плодотворной эпохи. Огромен его вклад в дело развития армянской филологии и искусствоведения. Г. Левонян стоит у истоков формирования гуманитарного направления в науке и является одним из основоположников этого направления в арменоведении. Его научно-исследовательские труды затрагивают самые разные области армянской филологии, культуры и искусства: ашуговедение, изобразительное искусство, эстетика истории и теории литературы, искусства книгопечатания, армянского театра и истории армянской периодики. В кругу научных интересов Г. Левоняна всегда находились также художественные произведения классиков русской и зарубежной литературы.

Несмотря на широту интересов Г. Левоняна и его выдающийся вклад в самые разные сферы арменоведения, его главным пристрастием оставалась история периодической печати, а также ашуговедение – области, в которых Левонян создал фундаментальные ценности. Составленные им хронологические сводные списки имеющей 140-летнюю историю армянской периодики являются лучшим подтверждением неоценимости его заслуг перед арменоведением.

Г. Левонян был не только выдающимся учёным-арменоведом, но и одним из пропагандистов и популяризаторов национальной культуры, литературы и искусства; вся его деятельность была направлена на повышение национального самосознания посредством изучения культуры и искусства.

THE DEVOTEE OF ARMENIAN CULTURE
(AN OUTLINE OF THE SCIENTIFIC ACTIVITY OF GAREGIN LEVONYAN IN THE SPHERE OF ARMENIAN STUDIES)

HOVHANNISYAN S.

Summary

Key words: Garegin Levonyan, Armenian studies, Gegharvest, ashug studies, book printing, Baghdasar Dpir, memoirs.

The beginning of the twentieth century was the “golden age” of the Armenian culture and Armenian studies, and Garegin Levonyan has a special place among the best Armenian scholars of that fruitful era. His contribution to the development of Armenian philology and art criticism is paramount. With his valuable research, he stands at the origins of the formation of Human sciences in Armenia and is one of the founders of this direction in Armenian Studies. His research works cover a variety of fields of Armenian philology, culture and art: Ashug studies, fine arts, aesthetics of the history and theory of literature, the art of printing, Armenian theater and the history of Armenian periodicals. G. Levonyan's scientific interests have always included the artistic works of the classics of Russian and foreign literature.

Despite the large scope of G. Levonyan's interests and his outstanding contribution to various fields in Armenian Studies, his main inclination has always been towards the history of the periodical press, as well as Ashug Studies – the areas in which Levonyan created fundamental values. Compiled by Levonyan himself, the chronological summary lists of Armenian periodicals having a history of 140 years, with their completeness and inclusiveness, the perfection of the presentation of bibliographic data, are the best confirmation of his inestimable services to Armenian Studies.

G. Levonyan was not only an outstanding scholar of Armenian Studies, but also one who advocated and popularized national culture, literature and art; all his activities were aimed at improving national self-consciousness through the study of culture and art.